ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 նոյեմբերի 2019 թվականի N 458-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետը՝

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ ե մ

1. ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահության ոլորտի կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծել տեսանելի տեղեկատվական հարթակներ կամ ստենդներ և այնտեղ մատչելի ու հասկանալի ձևաչափով տեղադրել ՀՀ Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամաբ հաստատված հավելված 1-ը, հավելված 2-ի 2-րդ գլուխը, հավելված 3-ի 1-ին գլուխը, հավելված 5-ը, պոլիկլինիկական ծառայություններ իրականացնող բուժհիմնարկներում՝ նաև հավելված 9-ը, ստացիոնար բուժհիմնարկներում՝ հիվանդների հերթագրման կարգը:
2. Առանձին ձևաչափով տեղադրել բուժումը, պետական պատվերով իրականացվող ախտորոշումների ցանկը, վճարովի ծառայությունների ցանկը և մարզպետի կողմից հաստատված գնացուցակը:
3. Հիվանդանոցային բաժանմունքներում /ըստ պրոֆիլների/ տեղադրել անվճար և համավճարով բուժման ախտորոշումները և վճարովի ծառայությունների գնացուցակը, ինչպես նաև անհրաժեշտ և կարևոր այլ տեղեկատվություն:
4. 2019թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն քննարկման նպատակով ներկայացնել հաշվետվություն՝ պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման համար նախատեսված գլոբալ բյուջեի թերակատարումների և գերակատարումների վերաբերյալ՝ ըստ ծրագրերի:

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

11/22/2019

X

ՄԱՐԶՊԵՏԻ
Թ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՏԵՂԱԿԱԼ Signed by: STEPANYAN TATUL 2501680073

21 նոյեմբերի 2019թ.
Ք.Իջևան